



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագիրն 10 ժր. տարեկան

Հասցե՝

Réd. du jour. „VERADZNOUTIOUN“.-Roustchouk

Ред. на в. „ВЕРАДЗНУТІОНЪ“.- Русе

ԲՈՒԹՈՒԱԶԻԱ ԵՒ ՊՐՈԼԷՏԱՐԻԱՍ  
ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ \*)

III.

Քաղաքականապես վախկատ, մտքով՝ երկիրդած և ոգով՝ շահախնդիր՝ Ռուսաստանի բուրժուազերի բուրժուազիան ընկալած առաջական դրություն մէջ յաւրիւմի առաջ, անտրտուն ընդունելով նրա ընթացիկ իր բոլոր և ամբողջական հետևութիւններով: Տնտեսականապէս նա սակայն այնպիսի ծառայ է ցարեղմի, որ բնաւ չզբաւեց չէ զգում հաւաքելու աղայի սեղանից թափուած փշրանքները՝ այլ և այլ մանր առևտրական առանձնաշնորհումներն ձեռն տակ: Հոգեբանորէն էլ նա այն ծառաներիցն է, որ անհամբեր սպասում են, նրա անկողնու գլխին, իրանց աղայի մահը, որպէսզի հոգեւոր միջոցին կիսազիւղի վրայ կատարեն իրանց առաջին խոշոր կոպուլտը: Ռուսաստանի բուրժուազիայի այդ դիրքը սակայն տանում էր դէպի քաղաքացիական սնանկութիւն և զրկում նրան ամեն քաղաքական լուրջ գերից և վճռական դիրքից:

Եւ, ընդհակառակը, հէնց այդտեղ է, Ռուսաստանի բուրժուազիայի այդ վախկոտութեամբ ու ծառայական ոգով ներշնչած՝ քաղաքացիական ինքնասպանութեան րօպէին է, որ, արդէն երևան եկած, Ռուսաստանի պրօլետարիատը բարձրացնում է գետնից ֆալսիֆիկան յեղափոխութեան գործին և սօցիալ-դեմօկրատիան, իբրև պրօլետարիատի պատմական ձգտումների արտաշայտիչ և նրա կուռի առաջաւոր գունդ, սկսում է վարել ղեկը: Կրող արդէն սօցիալական մեծ յեղափոխութեան գաղափարի, որն էլ կեանքի վերածողն ինքն է կոչւած լինելու, պրօլետարիատն այդպիսով, Ռուսաստանի քաղաքական առանձնաշատուկ ընթացիկ շնորհով, յայտնուեցաւ միակ գործադրող ոյժն ու տարրը նա՛ և

ֆալսիֆիկան յեղափոխութեան: Եւ, ահա ինչո՛ւ այսօր նրա կոչը՝ կեցցէ՛ սօցիալական յեղափոխութիւն՝ միակերպ զօրութեամբ շնորհում է նաև՝ կեցցէ՛ քաղաքական յեղափոխութիւն և անկէ՛ցի՛ միապետութիւն: Այդ աղաղակի մէջ կայ Ռուսաստանի բուրժուազիայի քաղաքացիական մահի զօղանջը, որի մութ ու եղբրական սուտերի վրայ մէկ առանձին պայծառութեամբ և չաւելի որոշակի կերպով գծագրում է պրօլետարիատի պատմական հսկայ կերպարանքը:

Եւ պրօլետարիատի գիտակցական մասը, սօցիալ-դեմօկրատիան, իբրև բանւոր դասակարգի կուսակցութիւն, Ռուսաստանում պարզեց գիտական սօցիալիզմի դրօշը և բանւորական շարժումները, դրանց ֆալսիֆիկան ու միջանկեալ նպատակները, որ յանգում են վերջնական նպատակին, սօցիալիզմի յաղթանակին, ձեակերպեց մէկ ընդհանուր ծրագրում: Հիմնելով դասակարգային կուռի սկզբունքի վրայ և բանւոր ընդհանրութեան դասակարգային գիտակցութեան զարգացման աշխատութեան վերայ, նա ձգտում է այդ դասակարգին ընդունակ ու կարող դարձնել լրացնելու իր պատմական միստիան: Այդ միստիան է սօցիալական յեղափոխութեան միջոցով րոխարինել արդիւնագործութեան և շրջառութեան միջոցների մասնաւոր սեփականութիւնը հասարակական արդիւնագործական պրօցեսի նախաշարժ կազմակերպութիւն հասարակութեան բոլոր անդամների բարորութեան ապահովման և բազմակողմանի զարգացման համար: \*) Եւ պրօլետարիատի այդ սօցիալական յեղափոխութիւնը կը ջնջէ հասարակութեան մէջ դասակարգերի բաժանումները և դրանով կազատարէ ամբողջ հարստահարած մարդկութեանը, որովհետև վերջ կը զնէջազագործութեան այնբոլոր

\*) Տես Ռուսաստանի Սօցիալ-Դեմօկր. Բանւ. կուս. - թեան Ծրագիր.

ձեերին, որոնք հասարակութեան մի մասի ձեւքին զէնքի տեղ են ծառայում միւս մասի դէմ: \*\*) Մի խօսքով՝ սօցիալիստական արդիւնագործական յարաբերութիւնները փոխարինել սօցիալիստական ընդհանրութեամբ է միջազգային սօցիալ-դեմօկրատիայի, որպէս պրօլետարիատի դասակարգային շարժման գիտակցական արտայայտիչ, ամբողջ գործունէութեան վերջնական նպատակը: \*\*\*)

Այսպէս, քաղաքակրթ մարդկութեան ներկայ կեանքում համաշխարհային սօցիալ-դեմօկրատիան հանդէս է եկել լրացնելու այդ պատմական մեծ, եղակի և ազատագրական դերը: Այդ դերն է՝ կործանել մարդկութեան հնացած և այլևս անպէտք, այլ և անարդար ու յուռի ներկայ հանրակենցաղի: Նա կառուցանող է նոր նիստ ու կացի, սօցիալական նոր յարաբերութիւնների թէ՛ միջազգային և թէ՛ ամեն-մի հասարակութեան ծոցն առանձնապէս, յարաբերութիւններ՝ հիմնը առ յո՛ւ թէ՛ մտացածին արդարութեան վրայ, այլ ա՛յն արդարութեան, որ առաջ է գալիս նոյն իսկ ներկայի կենսական պայմանների պատմականապէս, իբրև դրան յաջորդող շրջան մարդկութեան հասարակական շրջանափոխութեան (transformation) մէջ: Սօցիալ-դեմօկրատիան քննողն ու քննադատն է անցելու ներկայ հասարակական յարաբերութիւնների և կրողն է ապագայի: Սօցիալ-դեմօկրատիան մարտնչողն է ընդդէմ ներկայ հասարակական, այլ ևս ապրած, իր պատմական դերը լրացած և արդիւնագործական ձեերի ներքին անհաշտ հակառակութիւններին ենթակայ, բուրժուազական կազմակերպութեան, որա ամեն երևոյթներում՝ քաղաքական, տնտեսական, սօցիալական՝ միջուկն սրանց ամեն արտայայտութիւններում թէ՛ ընդհանուր և թէ՛ մասնաւոր, թէ՛ հաւաքա-

\*\*) Տես նոյն.  
\*\*\*) Տես նոյն.

կան և թէ՛ անհատական: Սօցիալ-դեմօկրատիան հապէս հիմնովին յեղափոխական է, որովհետև նրա գիտական թէօրիան ինքը, որ նշանակում է նրա իրագործման գործնական ու տեսական պայմանը, ինքը ենթադրում է՝ յեղաշրջումն ներկայ կապիտալիստական հասարակական բոլոր յարաբերութիւնների: Սօցիալ-դեմօկրատիան նաև ստեղծող է կառուցման մտքով, որովհետև նրա սկզբունքներն ամբողջական ամփոփումն են ա՛յն սօցիալական նոր կազմակերպութեան, ա՛յնքն սօցիալիստական, որի ձեերն ու կերպերը տրամաբանական արդիւնքն են և անխուսափելի հետևութիւնը, հը զօրապէս զարգացած չափով, հէ՛նց ներկայ հասարակական կազմակերպութեան օրգանական զարգացման: Եւ սօցիալիզմն այդպիսով յայտնում է մարդկութեան քաղաքակրթութեան կրօն-գիւն-հասնցիակն (quintessence), գերագոյն ամենալաւ արդիւնքը: Սօցիալ-դեմօկրատիան տիտան է, որ ծնելով անցեալի ու ներկայի քաղաքակրթութեան ծոցից, ձգտում ու դիմում է դէպի իր հանդէպ տարածւած անհուն ու բազմախոստում հօրիզօնը, որտեղից արդէն սփռւում են նոր արեւի առաջին աւետարեր ճառագայթները:

Այդ լինելով Ռուսաստանի պրօլետարիատի ինքնակազմ դերը, որ զեկալարում է սօցիալ-դեմօկրատիան, վերջինս հանդիսանալով պրօլետարիատի կազմակերպւած քաղաքական կուսակցութիւնը, միաժամանակ, Ռուսաստանի միապետական ընթացիկ շնորհով, նրա վրայ է ընկել նաև, ինչպէս տեսանք մեր այս մի շարք ազամայ կարծ, յօդւածներ ընթացքում, քաղաքական յեղափոխութեան խնդրի անմիջական լուծման դերը:

Յաջորդ վերջին յօդւածով մենք կանգ կառնենք այն կէտի վրայ, թէ գործնականապէս ինչ դիրք ունի այժմ սօցիալ-դեմօկրատիան Ռուսաստանում:

\*) Տես «Վերածնունդի թիւն» N-0 42.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ  
VII  
Գ Ի Ի Ղ Ե Ր Ո Ւ Մ  
Բ.

Ինչպէս որ անտառապահը մի փայլուն թիփեղի կտոր ճակատին կպցնելով իրեն երեւակայում և գիւղացիներին և անտառներին տէրը, այնպէս էլ գիւղական տանուտէրը բազմատեսակ զազիր ճանապարհներով ձեռք բերած ոմեւ տալը կախելով վզից՝ իրեն համարում է մի թաղաւոր գիւղերում և նրա բնակիչներին ամէն բանով մի քանի տասնեակ աստիճան բարձր:

Որպէս ասիացի մի տգէտ պաշտօնեայ, նա ժողովրդի վրայ բարձրից է նայում ու արհամարհանքով: Այն մարդը, որի շխարհը կամ եղբւրնկնում է ողջւենն աղայի ալգին, արօտատեղին, արտերը, պատժում է ասելի խիստ, քան թէ նոյնը պատահած լինէր մի աղքատ մարդու հետ: Այդ գեռ բաւական չէ: Պիւսեան աղայի պաշտպանութիւնն են վայելում, նրա յիշի տակ են լինում իւր բուրբ մօտ կամ հեռուոր խնամիներն ու աղգակիցները, ինչպէս և որքան թայ մարդիկ, որքազարի մարդիկ, որոնք աւելն աշակցութիւն ցոյց են տալիս ներան՝ իրենց շահերի և տանուտէրին միամտացնելու համար: Վերջիններս ունեցածին կամ նոյնիսկ յիսաթրին գիւղացին էլ պատժում է և կամ տանուտէրի աչքից ընկնում, որը գիւղացի աղքատի համար մեծ նշանակութիւն ունի: Նոյն բանն է սպասում և այն մարդկանց, որոնք զանազան պատիւներ չեն տալիս նրան, հարսանիքի բարձր տեղում չեն նստացնում ու փառաւորապէս հիւրասիրում, արեց-

նում, որոնք համարձակութիւն ունեն նրան տեսնելիս փափախնելը չի ջնջնել, որոնք յանդգնում են բաւարարութիւն չըտալ նրա պահանջներին, պահանջներ, որոնք միմիայն կաշառակերութիւն և ապօրինի հրամանների մէջ են կայանում: Իւր պաշտօնը կատարելիս միշտ աչքի առաջ ունենալ անձնական շահեր, զբաղուել հաշիւներ, խնամիական և բարեկամական կապերը և իրեն թայ մարդկանց պատիւն ու իւր այլ տեղատու միտումները: — Բնական աղայի և հասկացողութիւնը հասարակական գործի և այն ղեկավարելու պարտականութեան մասին:

Գիւղում համարեա ոչ մի ընտանիք այնպէս չէ ապրում, ինչպէս տանուտէրը: Գիւղական կոպիտ շտայլութիւնը իւր ամբողջ էութեամբ կարելի է գտնել նրա տանը: Մէկը ստիպած է, — ըստ արիւթի բառիս իսկական ու լայն նշանակութեամբ, — նրա համար (մտնաւանդ տօներին) շաքար ու թէյ բերել, որի երեսը ինքը իւր տանը բողբոջի կամ ամիսներով չէ տեսնում. երկրորդը մեղր, կարագ, պանիր, երրորդը՝ գինի, ողի, չորրորդը՝ գառ, իւլ, ձեռագործ շալ և այլն: Այդ յափշտակութիւնները նա անում է իրեն արգարացնելով, որ իւր տանը գնացող եկող հիւրեր շատ են լինում և որ ինքը ողջւենն է, գիւղի իշխանն ու առաջնորդը: Շուայլութիւնը լինում է և այն գրամներով, որոնք նա հազար ու մի լրութիւններով շորթում է աշխատաւոր գիւղական աղգարնակութիւնին: Մի խօսքով, տանուտէրի ապրուստի և հարստանալու աղբիւրը աղքատ դասակարգն է գլխաւորապէս:

Այդ տանուտերը ունտրում

է: Բայց... բայց վա՛յ այն ընտրութեանը: Չէ եղբւր գէպք, մեր յիշատակած գիւղերում, որ այդ պաշտօնը տրւած լինի հասարակութեան աղքատ, բայց խելօք անգամին: Պէտքում են գլխաւորապէս գիւղի ողորդներու: Ընտրութեան ժամանակը մօտենում է: Գիւղերում սկսւում է ունտրական ազիտացիան: Վերջինս առաջ է մղում՝ օղիով, գինիով, կաշառքներով, նէրներով, խոտուաններով և այլ կեցոտու ճանապարհներով ու միտումներով՝ իւրաքանչիւրը աշխատելով իւր հազգի (գրինակ՝ Օհաննէս, Սագոյնէս և այլն) առաջաւորին ընտրել տալու, որից ինքը ակնկալութիւններ ունի: Գիւղացիները, վերջապէս, հաւաքում են ոգտարանիս դրանը: Գաղտնի քէտրկութիւն չը կայ: Առաջաւորները ժամանակին կաշառած են լինում պրիտտաին կամ, նրա բացակայութեան ժամանակ, յաղթում մըրքակիցներին: Պրիտտաւը սկսում է իւր ճառը, որի մէջ նա պարտաւոր է գովել ու բարձրացնել նրան, որից աւելի համեղ պատու է ստացել և առաջարկում ընտրել նրան: Ո՞վ է կարող պրիտտաւի ներկայութեան ձեռք չբարձրացնել: Եւ ունտրում է մէկը: Յայտարարում է, որ ո՞վ է ընտրելը ընտրեց այսինչինս: Հրճում է պրիտտաւը, հրճում ինքը նոր ողջւեննէս, հրճում են և վերջինիս խնամիները, որմայֆիս մարդիկ: Հակառակորդները սեանալով ընկնում են անվերջ ինտրիգներին և խայտառակութիւններին մէջ: Ի՞նչ օյնիւրազութիւն և լիբա առեւտուր, առեւտուր հասարակական գործի և գործիչի պաշտօնի:

Գլխաւոր գեր խաղացողը կա-

շառքն է: Գիւղացու համար կաշառակեր ու հարստահարիչ է նա, ով իրեն հետ չի ունի, անմիջական յարաբերութիւն ունի. նոյնպէս և նա՞ ով իրենից հեռու է: Հասարակ գիւղական գիւղերից բունած միջին նահանգապետը, միւնիստը և աւելի բարձրը անամօթ կաշառակերներ են:

Ի՞նչ անէ աղքատ և խաւարի մէջ թաղած գիւղացին, ո՞ւմ գիւղի՞ ճշմարտութիւնը, իւր արգար իրաւունքները պաշտպանելու համար:

Միայն մի ճանապարհ կայ: Դա նա է, որ աշխատաւոր գիւղացին ինքը իւր դատաստանը իւր ձեռքով անէ: Ինչպէս որ նա իւր սեփական քրտինքով է հաց աշխատում ու ձեռք բերում, այնպէս էլ իւր սեփական արիւնով, կռուով կարող է միայն ձեռք բերել իրեն համար ազատ, մարդավայել ու բարեկեցիկ կեանք, շուրջը միայն իրեն նման մարդիկ տեսնելով, շուրջը հաստարութիւն ու արգարութիւն տեսնելով: Եւ նա կը հասնէ այդ գիտակցութեանը կատարելապէս:

Բագու Անիխան

Ի Մ Ն Ա Ս Ա Կ Ն Ե Ր Ը Ա Ի Ն  
Ն Ա Մ Ա Կ VIII.

Սիրելի ընկեր!

Ամէն ժամանակ և ամէն աղգաց մէջ նոր գաղափարների, մտքերի և ազատ թռիչքների անխնայ կարագիտները թարմ ու անկեղծ երեստասարգ սերունդն է հանգիստացել: Եւ դա կարծեմ շատ բնական է, քանի որ ամենապարտաւոր, ամենաանողորտ և մաքուր, ինչպէս և այդ բոլորի վերայ աւելացրած նիւթական և ընտանեկան բոլոր հոգսերից

Լ. ՔՕԼՍՅՈՅ  
ԵՒ ՍՕՅԻԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

Սօցիալիզմի գիտակցական հակաակորդ ըլլալը՝ կեղ Թօլստոյ յատակ կերպով կապացուցանէ իր վերջին գրքոյկներով, որոնք ուղղուած են սօցիալիզմի քննադատութեան և կամ զայն հերքելու: «Կոչ դէպի բանուոր ժողովուրդը՝ գրքոյկին մէջ սօցիալիզմը կը նկարագրուի իբր անբարոյական վարդապետութիւն մը, հիմնուելով սս տեսակ դատողութիւններու վրայ: «Սօցիալիստական վարդապետութիւնը համաձայն չէ այն կանոնին որ կը տրամադրէ ուրիշներու ընել այն, ինչ որ կուզես քեզի ընեն. ան համաձայն չէ այս կանոնին նախ այն պատճառաւ, որ իր հիմունքին մէջ առաջին տեղը կը գրաւէ դասակարգային իրիւր և յառաջ կը բերէ բանուորներու մէջ և ընդհանրապէս դէպի ոչ-բանուորները այնպիսի թելանամական զգացումներ, զորս տէրերը երբէք չեն փափաքիր ունենալ բանուորներու հանդէպ: Ան համաձայն չէ այս կանոնին նաեւ անոր համար, որ բանուորները գործադուլի ժամանակ, իրենց գործին յաջողութեան համար,

յաճախ բռնութիւն բանեցնելու անհրաժեշտութեան կը դիմեն ազգակից կամ օտար այն բանուորներու դէմ, որոնք անոնց տեղը անցնել կուզեն»): Ուղղելով իր խօսքը դէպի քաղաքական գործիչները, Թօլստոյ կրէ թէ՛ ասորի բոլոր թշուառութիւններու պատճառներն են. — ու քացում ամէն տեսակ կրօնքի և այն որ ժողովրդի գործունէութիւնը կուղղուի կառավարութեան յեղափոխութեան և սօցիալիզմի ծառայելու»): Ինչպէս կը տեսնէ ընթացողը, սօցիալիզմի ծառայելը Թօլստոյ համահասարակը համարէ կառավարութեան ծառայելու և զայն կը նկատէ իբր արդի իրականութեան չարիքներէն մէկը:

Ինչպէս է թէ ի՞նչ օգուտ կրնայ ունենալ սօցիալիզմը՝ Թօլստոյի դէպի կառավարութիւնը ունեցած քաջասակամ յարաբերութիւնէն, երբ նոյն այդ Թօլստոն ինք կը հերքէ յեղափոխութիւնը և սօցիալիզմը:

Աւելի անդին, նոյն այդ գրքոյկին մէջ, հեղինակը, ցաւ յայտնելով որ քաղաքական գործիչները թղուր կը

\*) էջ 26, «Բարտար, Ազատ խօսքիս»  
\*\*) «Դէպի քաղաքական գործիչները», էջ 26:

վատնեն իրենց ուժերը. կրօն, որքան երկտասարգ, խանդոտ ուժեր կը վատնուին յեղափոխութիւն ընելու համար կատարուած փորձերուն, կառավարութեան դէմ մղուած անկարելի կռուին և սօցիալիստական անխախտ անակախտ անհրաժեշտութեան համար: Սօցիալիզմը կը նկատուի իբր անիրականանալի երա՛զ: Ասիկա խիստ բնորոշ է ու թոփխտ Թօլստոյի համար:

Թօլստոյ, որ կը կարծէ թէ կարելի է ներկայ պետութեան ջնջումը զինուորական ծառայութեան անձնակազմի միջոցով, թէ՛ ժամանակ մը յետոյ մարդկութիւնը պիտի հրաժարի կուլտուրայէն, պիտի ջնջէ արւեստը և պիտի սկսի առքէտրքական կեանք վարել («Ատուտանային թագաւորութիւնը մէր մէջ»), թէ՛ կարելի է վերջ տալ սեռական սիրոյ, — չի հաւատար հասարակական սեփականութեան տիրապետութեան կարելիութեան: Ասիկա կը յիշեցնէ Ա. Ե. Մարտինովի և իր արտասարգը, որ խիստ ճշգրտագու թեամբ կը գործադրէր տանաբանայ պատուիրանքը, սակայն ան «դիւրութեամբ ընտանացաւ», երբ Յիսուս զինք խրատեց, որ աւելի կատարեալ ըլլալու

\*\*\*) էջ 24, ընդգծումները մերն են:

համար պէտք է իր հարստութիւնը բաժանէ: Ինչպէս յայտնի է, Յիսուս անմիջապէս եկաւ Մարթայ այն եղբարկացութեան, թէ աւելի զիր իրն է ուղտին սակընի ծակէն անցնելու, քան թէ հարստտին արքայութիւն մըտնելու:

Վերս. գրուածները ինկատի ունենալով, մնդի բողբոջին զարմանք պատճառեց Ռուս. Սօց. դէմ. բանուորական կուսակցութեան Բէրմի քովի թէյին այն յայտարարութիւնը, որ հրատարակած էր Թօլստոյի յորելեանին անթիւ: Մեր Բէրմի ընկերներուն յայտարարութիւնը յայտարարեց սկսի. — Մենք, ռուս սօցիալ-դէմօքրատներս կը շարկապինք այս պատահական հոնդամանքը (յորելեանը) մեր ժամանակի ամենամեծ խնդրին — քաղաքական ազատութեան հետ:

Ինչպէս է ուրեմն թէ ի՞նչ ընդհանուր կապ կայ շարքին ըրանութեամբ չընդգիծանալու անընդհատ հակադիմադրական քաղաքիկ և այն կորովի յարձակողական կռուի մէջ, որ կը մղէ ռուս գործաւորական մասսան իր քաղաքական ազատութեան համար: Արքայեւ, վերջին ժամանակներս, Թօլստոյի անունը քաղաքական խօսակցութիւններու առիթ տը-

զուրկ՝ հետեւաբար և իրական կեանքի դառն պտուղը գեռ չը ճաշկող այդ նոր սերունդն է, որ գեռ դպրոցական նստարաններին սկսած, սգեորուելով և ներշնչուելով մարդասիրութեան, հասարակութեան և արդարութեան ամենալստիմ և ամենաբարձր իդէաներով միշտ ձգտել է այդ նորարարող գաղափարները թէօրիաների նեղ շրջանակներին իրականութեան ծոցը դրնել։ Նա այդ օրուանից ուխտում է և իւր նշանաբանն է ընտրում կռուել մինչև վերջ ընդդէմ բռնակալութեան, ընդդէմ անարդարութեան, ընդդէմ ալատ խղճի և մամուլի բռնաբարման և լին. այլապէս ասած, նա՝ ընկած, տանջուած ու հալածուած մարդկութեան ցաւերի կենդանի արտայայտիչը և նորան ամօքող փրկարար հրեշտակն է հանդիսանում։

Այդ ընդհանուր օրէնքից զերծ չէր կարող գտնուել և ուսուցիչ և սերունդը, որի արժանաւոր ներկայացուցիչը այսօր ամենայն իրաւամբ ուսուսանողութիւնը կարելի է համարել։ Նա եղաւ առաջին անգամ բռնակալութեան ինքնակալութեան ստակալի ընդդէմ, նոր մարդակեր վարձկան պաշտօնեաների նողկալի օտնձգութիւնների. նորա միլիտանտ բաշխօչուկների բխայած սրբերի ապօրինութիւնների դէմ անդրանիկ բողոքաւորը։ Անարգելով նա իւր ամբողջ ապագան, Պետրոս-Պապեան և նոյնանման ահաբեկի բանտերի, աքսորանքների և կախալանի հրեշտակներ տանջանքները, այնուամենայնիւ բարձր, շատ բարձր պահելով իւր կրթութիւնը՝ ճշմարտութեան, հաւասարութեան և ընկերասիրութեան անազարտ ու վսեմ՝ գրօշը և ըսկզբունքը՝ տեղն ընկած ժամա-

նակ, մինչև իսկ կենդանի օրի նակով անբիծ արեան գնով չը զլացաւ իւր անձնութիւնը ու անկեղծութիւնը ո՛չ միայն իւր հայրենակիցներին, այլ և ամբողջ մարդկութեանը յաղթական դափնի և օծիտ թողնելու։

Բայց ցաւօք սրտի պէտք է խոստովանել, որ ուսուսանողութեան մեծագոյն մասից մինչև օրս էլ կրօնական ֆանատիկոսութեան, նախապաշարունակների և շովինիստութեան նեղ ոգին և վայրենի բնազդը այնքան էլ հեշտութեամբ իրենց դարեւոր կապանքներից չեն կարող ազատ մնալ, որ նոցանից մի մասն էլ միայն խօսքով կամ լոկ իւր թէօրիա է ընդունում համաշխարհային սօցիալական գաղափարը, մինչև և իրականացնել է ի նա նոյն ֆանատիկ ուսուս է և ոչնչով չի տարբերվում նոյն՝ ցարի, ծուռ խաչի և հայրենիքի կոյր պաշտպան հասարակ մոմիկից (Կոնստանդ բուն Ռուսաստանի հարազատ զաւակները)։ Ահա թէ ինչու համար, սիրելի ընկեր, սօցիալ. շարժումներ և ցայցեր սարքելը կենտրոնական Ռուսաստանում այնքան էլ հեշտ բան չէ, որքան կայսրութեան ծայրերում՝ Կովկաս, Բեսարաբիա, Ֆինլանտիա, Լեհաստան և այլն. որովհետև դեռ չհաշուած ցարի և հայրենիքի կոյր պաշտպան զանազան, այսպէս ասած, հակասօցիալական Չոբաթեան կուսակցութիւնների տխմար հետեղներին, — իւրաքանչիւր մի ընտանիքի անդամն էլ գրեթէ լրտեսի և անկոչ ստիկանի գեր է կատարում. բայց և այնպէս, ոչ մի անբարեխաղ հանդամանք չի կարող խոչնդոտ հանդիսանալ այդ լուսաւոր գաղափարի կայսրութեան ամէն անկիւններումն էլ իւր ցանցը ձգելուն, ինչպէս այդ

իրաւամբ նկատուել էր Ռուս. Սօց. դէմ. կ. — թեան թուրքիկներին մէկում. հարաւային տաք հասանքը ուղղվում է գէպի հիւսիս և իւր ճանապարհին պատահում է պաղ սառոյցների ու խիտսառնամանիքների. սակայն նորքանչօր են լինում ազդել նորա վերայ։ Վերջապէս պաղ սառոյցներն էլ կամայ կամաց հալվում են ազատութեան այրող սրբազան ճառագայթներից ։

Մի քիչ առաջ արդէն յիշեցի, որ նեղ շովինիստութեամբ ու բնազդներով սնուած և մեծացած շատ ուսանողներ են պատահում։ Անպայման քեզ մեծ զարմանք պէտք է լինի, եթէ ասեմ, որ Գիշինկի հրէական կոտորածին պատճառ եղող գլխաւոր առաջնորդների (էջ գտնվում են՝ Դոն. Վերմիա, Մոսկովսկի Վասիլևսկի, Ռուսկ. Վաստ. և Ռուսակոն Ժողովարանի ամբարտաւան շիօլա. ից դուրս եկած ուսանողներ ևս. . . Օ՛, այդ ուսանողների պատմութիւնը և նոցա տմարդի վարմունքների պատճառով պարբերաբար յառաջ եկած ուսանողական խլրտումները, յուշումները, գանդափոներն ու ճառերը շատ երկար են։ Խնդիրը նորանումն է, որ ուսանողները ընկերական դատաստանի ենթարկելով իրենց ոճրագործ ընկերներին, ամենից առաջ Ռուս. ընդհ. ուսանողութեան միաձայն վճռով որոշուեց դուրս արտաքսել այդ ստոր արարածներին. բայց ինչ ասել կուզի, որ ո՛չ թէ միայն համալսարանական վարչութիւնը, այլ և ստիկանութիւնը պաշտպան հանդիսացան նոցա, որով մինչև օրս գրեթէ ուսանողութեան յուշուած մոքերը չի խաղաղացել։ Հէնց այս պատրուակի տակ այս տարի ուսանողութիւնը քանի քանի անգամ ցոյցեր սար-

քելու պատրաստութիւն տեսաւ, որքան սպառնաց համալսարանի վարչութեան, թուրքիկներ բաց թողեց, առտիտորաների և ուսուցչականների դռներին բողոքներ կայցրեց և իւր արդար պահանջները արտայայտեց. բայց բոլորն էլ իզուր անցան, ուսանողութեան պահանջներին բաւարարութիւն տուող չեղաւ, իսկ զեկավարներին էլ ամենափառաւոր կերպով կառավարութիւնը ձեռք բերելով (իդէպ է ասել, շատ հեշտ է այդ, որովհետև կառավարութիւնը նոյնիսկ դպրոցներումն էլ լրտես ուսանողներով հեղեղել է) ամէն ինչ որպէս թէ արմատախիլ անել է ցանկանում։

Շատ աննախանձելի է իսկապէս ուսական դպրոցների դրութիւնը։ Մինչև անգամ բարձրագոյն դպրոցների հասակը առած ուսանողութիւնն էլ իւր իրաւունքների կոզմից զրեթէ նոյն զինուորական խիտ գիւցիպլինային է ենթակայ, նոյն իրաւազուրկ ստրուկն է ուսուցչակետների կողմից զանազան դարտակցերմոնիաների վերաբերմամբ որքան տարրական և միջնակարգ դպրոցների աշակերտները, կամ, աւելի ճիշտ ասած, որքան մի զինուոր իւր սպայի վերաբերմամբ։ Նա պարտաւոր է հէնց բարձրագոյն դպրոց մտնելուն իւր մանրամասն հասցէն, մի շարք զօկուէնտներ, ապրուստի միջոցներ, պայմաններ, պարագաման ժամեր, որ տեղացի լինելը, ինչ դաւանութեան պատկանիլը և լին. ամենից առաջ յանձնել յատկապէս հէնց այդ նպատակի համար համալսարաններում հաստատուած պոլիցիական վերահսկողներին։ Ուսանողը համալսարան մտնելուն պէս պարտաւոր է ամենապայելուց կերպով զինուորականներին նման բոլորին բարեւել, մինչև անգամ

ւած է։ Բայց այս իրողութիւնը կապացուցանէ մէկ կողմէ ուսուսանողութիւնը քաղաքական զարգացումը, իսկ միւս կողմէ՝ այդ զարգացումին անբաւականութիւնը։ Ատկէ ետք, նոյն այդ յայտարարութեան մէջ, թօլստոյի իբր մէկ արժանիքը կը մատնանշուի անոր մարդերուն ուղղած «Աստուծոյ հետ բարոյական միութեան կոչը»։ Մենք կը կարծենք որ Սօցիալ-Իէ-մօկրատիան, որուն գործն է բանաւորական դառակարգին գիտակցութեան զարգացումին նպաստել, պէտք է անոր ներկայանայ յստակ գաղափարներով, Գալով «Աստուծոյ հետ բարոյական միութեան» բաղադրութեան, (комбинация) թէպէտ եւայս մասին բոլոր միտքիկները, սկսած Բլաւոստին մինչև թօլստոյ, զանազան դատողութիւններ ըրած են, բայց այս գաղափարը դասի մը չափ յատկութիւն չէ ստացած։ Եւ այս գաղափարը չի բացատրուիր սա պատճառով, որ միտքիկները կը սկսին քարոզել Աստուծոյ հետ բարոյական միութիւն միայն այն առնի՝ երբ ալ կը դադրին հաւատալ մարդկային առողջ բանականութեան։ Բացի ատկէ, կը կարծենք որ Սօցիալ-Իէ-մօկրատիան, պէտք չէ Աստուծոյ անունը պարագ սեղը յիշել

այսինքն առանց ներհալու անոր գոյութիւնը։ Երկնային տիեզերքը կեղծ գոյութիւնը երբէք օգուտ չէ բերած գործաւոր ժողովրդին, այլ ընդհակառակը գործիք դարձած է տիրակալող դասակարգի ունեւորանի խիտ կերպով ճնշելու աղբատները։ Հետեւաբար, Մարքս, յեղափոխականի մը պէս կը խորհէր, երբ կը կարծէր որ կրօնքի քննադատութիւնը հաւատարիմ նշանն է իրենց ժամանակը ազգայն հասարակական ձեւերու քննադատութեան։

Մեր Բերմի ընկերներու յայտարարութեան մէջ կըսուի նաև թէ թօլստոյ ցոյց տուած է ժողովուրդը իբր միակ խաւը, ուսակից պէտք է ազատութիւնը սպասել։ «Մեծ մարդը նոյն ինքը պտու իլքը. ժողովրդին մէջ պէտք է փնտռել փրկութիւնը. — հոն (ժողովրդի մէջ) ամենէն լաւ կը հասկցուին կրօնի համար ելած կոչները, ձիւտ թէ թօլստոյ ցոյց տուած է ժողովուրդը իբր միակ ընկերային խաւը, ուր միայն կարելի է ելք գտնել, որ ելքը, ժողովրդի ո՛ր տարբերը փրկարար են Լ. Ն. թօլստոյի հայեցակէտով։ Ան կրնայ ժողովուրդը ցոյց տալ իբր փրկարար ուժ մը, եւ փոխանակ ժողովրդի շահերուն պաշտպան ըլլալու ա-

նոր ամենէն վնասակար թշնամին ըլլալ։ Օրինակի համար, սլաւասէրներն ալ յոյսերին դրած էին ուսուսանողութիւնը, իբր միակ ուժը, որ կոչուած էր ազատելու ուսուսանողութիւնը արեւմտեան փոսած քաղաքակրթութենէն և առաջնորդելու գրեթէ ամբողջ մարդկութիւնը իսկական կրօնքին ծոցը։ Չանոնք դէպի ժողովուրդը քաղող միտքիկական տարբերն էին, որոնք յառաջ եկած են տգիտութենէն, և ա՛յդ տգիտութեան մէջ է որ ուսուսանողութիւնը կ'աշխատի ժողովուրդը պահել, սպասելով նորէն անկէ իր փրկութիւնը։

Սլաւասէրներու պէս, թօլստոյ ո՛չ թէ ժողովրդին դեպի լուր և լոյս ունեցած յատկութիւնը կը գնահատէ, այլ անոր սպէտ հաւատքը, տխմար համբերութիւնը եւ անտանելի աշխատանքը, որոնք պիտի փրկեն քրիստոնոնէական հաւատքը։ Ասոր իբր ամենափայլուն ապացոյց կը ծառայեն բոլոր այն գեղազան գրական տիպերը, որոնք դուրս բերած է թօլստոյ Փրիկերմ կրիչա. Բլաւոստի Գարատաէֆ և Աքերն, «Սաւարի իշխանութիւնը» ի մէջ, կ'արտայայտեն այն ժողովրդային փրկարար ուժերը, որոնք սիրելի են թօլստոյի։ Այս տիպերը ու-

րիչ բան չեն ներկայացներ, բայց և թէ մարդու խայտառակ եւ անվերջ համբերատարութեան մարմնացումը եւ գերութեան ու տգիտութեան վիճակէն ներքնապէս գործ մնալը։

Թուելով արդի ուսուսանողութեան սարսափները, Բէրմի ընկերները այսպիսի անսպասելի եղբակացութեան կը կը յանդիմ. «Այսպէս հոտ չէ սարսափը։ Աւելի տանջող հակասութիւն մը կայ, այն է՝ ուսուսանողութիւնը և իր մեծ գաւակին թօլստոյի մէջ գոյութիւն ունեցող հակասութիւնը»։ Տարօրինակ բան։ Կը կարծենք որ աւելի մեծ հակասութիւն մը կայ գիտակցական կառավարութեան և արքայական կառավարութեան մէջ, քան թէ անտարբերութեան և համբերատարութեան քարոզիչին և ուսուսանողութեան մէջ, որ միւսնոյն լանը կուզէ։ Լէվ թօլստոյի չարքի դէմ բռնութեամբ չընդդիմանալու վարդապետութիւնը ո՛չ թէ միայն կը հակասէ ուսուսանողութեան, այլ յաւիտենական գեղեցկագիտական սկզբունքի կարգէնացած դարեւոր գերութիւնն է ան։

բոլոր սրբոց պատկերների առաջ խորին երկնազածութեամբ խաչակնքել, բոլոր ֆակուլտետներում գոյութիւն ունեցող կրօնի պատարեցողիչ գասերին հետևիլ (հակառակ դէպքում, թէկուզ սրբան էլ ուսանողը միւս առարկաներից յաջող քննութիւն բռնէ, նա ոչ իւր գիպումը կարող է ըստանալ և ոչ էլ կուրսեր կարող է փոխել)։ Իայն դրանից, ըստ օրինի, Ռուսաստանի ուսանողը ուսանողական ժողովներ, երեկոյթներ, վիճաբանութիւններ և այլն իրաւունք չունի կատարելով թէ նախապէս թոյլտուութիւն չի ստացել համալսարանի վարչունից, հակառակ պարագային, բաւական է ամենափոքրիկ կասկածը, և ահա այդ յանգուգն և պարտազանց ուսանողի բնակարանը կը շրջապատուի ցարի կատաղի բաշխօզուկներով։

Այս բոլորից յետոյ կարծեմ էլ հարկ չկայ ասելու, որ ուսուցչապետները կազմն էլ ուսուստանում իւր լրբութիւնները և ստորութեան կողմից պոլիցիականներինց յետ չի մնում։ Եւ գալատ պարզ է, քանի որ մինիստրութիւնից ընտրութեան ժամանակ ուսուցչապետները գիտութեան կամ վարք ու բարքի արժանաւորութեան չեն մտիկ տալիս, որով հրապարակը՝ արժանաւորների հալածման պատճառով մնում է անարժան և վարձկան մարդակեր վոհմակներին։

Յգրութիւն  
Ինք միտ սիրող ընկեր  
Մոսկուա Առաք

**Ե Ա Ն Ք Ի Ն Ե Ր Ո Ւ Ա Շ Ի Ա Ր Հ Է Ն**

**Հ Ա Յ Հ Ա Ն Ա Պ Ե Տ Ա Կ Ա Ն Կ Ո Ւ Ս Ս Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը /**

Ո՞վ ըստ թէ հայ գանկերու մէջ գոյութիւն չունի կուսակցական գաղափարը, թէ հայերը կուսակցական ժողովուրդ չեն։ Ի՞նչ քանակը որ կողմ ուզես, անպատճառ դէմը կը գրտնես անոնցմէ, մանաւանդ երեքներու աշխարհին մէջ, որ հայ կուսակցութիւնները սպունգի պէս կը բուսնին։ Մտի՛ր աստը հոգիէ բաղկացած հայ խումբի մը մէջ, կը տեսնես մէկը հնչակեան է, միւսը՝ նոր գաշնակցական, մէկը՝ ալֆարիստ, միւսը՝ հին գաշնակցական, մէկը՝ հայկական քաղաքական կազմակերպական կուսակցութեան (?) անդամ, միւսը՝ խաղաղ յառաջդիմական, մէկը՝ դեմոկրատական կուսակցութեան հետևորդ, միւսը՝ շէզոքներու կուսակցութեան (փակագծի մէջ) ըսենք, որ այս վերջինը հայութեան մէջ ամենէն մեծ կուսակցութիւնն է իր ոչ խարային դրութեան անհամար բազմութեամբ) չեմ հաւատալով մը։

Սոյն կուսակցական լէգէոնին կը պատկանի հայ հանրապետա-

կան կուսակցութիւնը։ Այս մարդոց նպատակն է՝ 1. Ամերիկեան հայերու մէջ ստեղծել քաղաքական կեանք, 2. ծանօթացնել զանոնք տեղացի կուսակցական մարմիններու հետ, 3. տեղեկութիւն տալ քաղաքական ու կուսակցական խնդիրներու, վարչական գործիքներու և սկզբունքներու վրայ, 4. պաշտպանել հայ ամերիկեան քաղաքացիներու քաղաքացիական իրաւունքները (?), 5. պատրաստել արժանի հայ ամերիկեան քաղաքացիներ, 6. յարմար գործ գտնել անոնց։ Ահա գլխաւոր գծերը մեր հանրապետական եղբայրներու գաւառած սկզբունքներուն։

Անցեալ օր, Ապրիլ 30-ին, ունէին անոնք հրապարակային և անդամական ժողով, որուն բանախօսելու հրաւիրուած էին բացի մերայիններէն, որոնք կէս տուգինա կային, երեք ալ եանքիներ։ Ժողովի բացման ժամը որոշուած էր 8-ին։ Ըստ անդրկական ճշգրտագոյնութեան, ութին երկու վայրկեան մնացած ժողովատեղին կը ժամանեմ՝ յուսարկող ժողովը սկսուելու վրայ է։ Մէկ երկու յարկերէ վեր ելլելով՝ դէմս կը ցցուի միջին մեծութեամբ սրահ մը։ Ամերիկացի հանրապետականներու ակումբի սրահն էր ան։ Կը նայիմ ներս, և ո՞վ զարմանք, բացի պատի զարդարանքներէն և աթոռներէն ոչինչ կը տեսնեմ. կը բռնադատուիմ ըսել իւրովի. «այս նշանակուած եւրոպական 8-ը հայկական ութը ըլլալու է», որովհետեւ մենք հոս ժողովի մը բացումը 7-ին կը յատարարենք և 9-ին ներկայ կը գտնուինք։ Երբ կը պատրաստուէի վար իջնել, մէկ ալ յանկարծ սրահի մէկ անկիւնէն երկու հոգի նապաստակի երկչոտութեամբ և վարանումով կը յառաջանան դէպի սրահի գուռը. ասոնցմէ մին եանքի մըն էր՝ սրահի պահապանը՝ ճաղատ գլուխով ու եղովբոսեան կազմուածքով մի արար ծ, միւսը՝ հայ մը, որ հաչիւ հեռացած Ոսկորի հիանալի արժանքներէն, եկած նետուած էր եանքիներու աշխարհը իր հետ բերելով փայլուն ապագայի մը ակնկալութիւնը։ Աթոռ մը կը հրամայուի, ու կը նստիմ։ Ասկէ անկէ կը խօսիմ. մինչև որ ժամը ինը կը լալայ։ Ամերիկացի բանախօսներէն երկուքը, ստացուած հեռագրի մը համաձայն, նոյն գիշերը կը ճամբորդէին դէպի... հեշտանքի աշխարհը և այդ պատճառով չէին կրցած ներկայ ըլլալ ժողովին։ Իսկ ժողովուրդը այնքան շատ էր, որ իւրաքանչիւր անհատ երկու աթոռ գրաւած էր՝ մարմնոյն կէսը մէկուն, կէսն ալ միւսին վրայ զետեղելով։ Ժողովի նախագահը՝ խնդուեմերես և ֆրանսական մօրուքով միջազատակ հայ ուսուցիչ մը՝ բեմ կեղծ և ժողովը բացուած կը հռչակէ։

Քարտուգարը, ըստ առաջարկութեան ալ, նախագահին, կը կարգայ նախորդ ժողովի արձանագրութիւնը։ Ի՞նչ հիանալի ընթացքներով, ի՞նչ հրաշալի առողջանութիւն. շիտակը, արգահատանքս չեմ կրնար զսպել ամէն անգամ որ կը յիշեմ այդ արձանագրութեան ընթացքը, որ մարդուն վրայ տաճկական բաղնիքի տպաւորութիւնը կը ընէ։ Արձանագրութեան ընթացքումը աւարտելէն վերջ, այն ինչ նախագահը ըսած էր հանրապետութեան մասին, ահա յանկարծ բարձրահասակ շիֆ հագուած հայ մէկը մըն մը նստած տեղէն վեր կը ցատկէ և կը կարգայ անգլիերէն գրութիւն մը, բացատրելով տեղացի հայերու Ամերիկայի քաղաքական կեանքի մէջ բռնելիք գիւրքը. նախագահի հաւանութիւն ընող կա՞յ արձանագրութեան մասին՝ կրկնութեան վրայ՝ նորէն ուրիշ հայ մը ոտքի կելլէ և անգլիերէն նոյնիմաստ գրուածք մը կը կարգայ այնպիսի՝ խնդ ու կրակ արտասանութեամբ մը, որ մարդուն ստամոքսը տակն ու վրայ կը ընէ։ Չհասկցայ թէ հաւանութիւն ընող կա՞յ խօսքը հանրապետութեան մասին, ճառ արտասանող կա՞յ կը հասկնային։ — Շատ հաւանական էր նախագահը կըսէ. «ինչո՞ւ կը լըռուէք, նախորդ արձանագրութեան մասին դիտողութիւն մը ընող չի կա՞յ միթէ»։ Այս անգամ ուրիշ մը ոտքի կը կանգնի և կըսի՝ անգլիերէն բաներ մը կարգալ։ Այդ ապագուկ առաջ բերող գրաւոր ճառերէն վերջ, անդամներէն մին կառաջարկէ, որ անդամական հրապարակային ժողովը։ Առաջարկութիւնը կը ընդունուի և հինգ վայրկեան ատեն կը տրուի, որ անդամակցիլ փափաքողները երթան ատենագրարին արձանագրել տան անուններին։

Շիտակը, ըսելիք չկայ հայերու կարգապահութեանը. անպատեհ ժամանակ ժողովատեղիներէ կամ սրահներէ գուրս վազելը մեր սովորութիւնը ըրած ենք ալ։ Հրապարակային ժողովը սկսած պահուն ներկաներէն ոմանք գլխարկին առած ժողովարարէն գուրս կը վազէին՝ առանց նկատի իսկ առնելու, որ ատկէ մեծ անարգանք չէր կրնար ըլլալ բանախօսներու և ժողովին դէմ։ Ներկայ եղող եանքի բանախօսին վրայ այնքան գէշ տրպաւորութիւն կը թողու այդ ընթացքը, որ պարզ բառերով կը պատարակէ այդ կողմի վարմունքը, և գուրս վազողները ամօթալից կը դառնան ու կը նըստին իրենց տեղը։

Առաջին ճառախօսն էր A. V. Campbell, կրակոտ հանրապետական մը, որ կէս ժամու չափ խօսեցաւ՝ իրեն նիւթ առնելով հետեալ բնաբանը. «միութիւնը

զօրութիւն է»։ Բացատրեց միանշանակ և միասիրտ գործելու օգուտները՝ ցոյց տալով նոյնպէս հանրապետական կուսակցութեան ուրիշ կուսակցութիւններու վրայ ունեցած առաւելութիւնները. յորդորեց հայերը, որ ձևաբար ամերիկացի հանրապետականներուն, որոնք զիշեր ցերեկ կը տքնին հասարակութեան բարգաւաճման, զարգացման ու յառաջադիմութեան համար։ Կորովով ու աւելնով խօսող եանքին կը նստի տեղը մեծադորգ ծափահարութեանց մը։ Անկէ ետքը նախագահը զովասանական մէկ քանի խօսքեր կուղչէ բանախօսին այն համակրանքին և ձևաթուութեան համար, զորս կարգ մը հայեր (նախագահի ըսածին նախ ինքն ամերիկացի բանախօսէն) նախագահէն յետոյ բեմ կը հըրաւիրուի սնն չ. անունով, որ անգլիերէն, կէս մըն ալ հայերէն լեզուով քանի մը խօսք կընէ հանրապետութեան մասին, ուրկէ բան մը չի հասկցուիր։ Երբ խօսքը կաւարտէ պ. Հ., ոտքի կելլէ պ. Campbell և կը յայտարարէ հայերուն թէ՛ անոնք որ կը փափաքին քաղաքացիութեան թուղթ առնել, ինքը պատրաստ է օգնել անոնց։ Գիշերուան ժամը 11-ին կը փակուի ժողովը՝ Մայիս 14-ին նորէն գուրս մարտելու որոշմամբ։

Այսպիսի համախմբուածութեամբ վրայ միայն լոկ քմիծաղով կը նայի մարդ, մանաւանդ երբ մտէն շօշափէ այն խարդաւանանքը, որուն զուր հասարակ ժողովուրդը եղած է միշտ։ Յուցամուրթութիւնը մեր տխուր յատկանիշներէն մին եղած է. կուզենք յաճախ ինքզինքնիս ցոյց տալ այնպէս՝ ինչպէս չենք. այդ յատկութիւնը կը փայլի մանաւանդ եւրոպացեան հայերէն շատ շատերուն վրայ։ Մարդիկ՝ խորթացած ու ալլասեռուած, որ իրենց ազգի և լեզուի վրայ կը նային ամենախորին զգուշութեամբ մարդիկ, որ անհատի վրայ անգամ արգահատիլ անոր օգնութեան ձեռք կարկառել չեն գիտեր կամ չեն ուզեր, կերթան առանց ամշնալու ձեռք զարնել հանրային այնպիսի խնդիրներու, որոնց համար ո՛չ ոքի, ո՛չ խելք և ո՛չ ալ ձեռնհասութիւն ունին։ Իայց ի՞նչ փոյթ իրենց, կը բաւէ որ հասարակութեան ցոյց տան թէ իրենք ալ գործի վրայ են։ Ահա այդ տեսակ մարդոց ամբողջ իտէալը, իտէալ՝ որուն վրայ մենք, սօցիալիս յեղափոխականներս, արհամարհանքով կը նայինք։

2 Մայիս, 1904. Վարդ Նիւ-Եորք